ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4494-Ա « 04 » նոյեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՒԲԱՅ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի Ն/63020-25 գրությունը և ICOM-ի նախագահ Նասիր Ալդարմակիի հրավերը՝ Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) «Թանգարանների ապագան արագ փոփոխվող համայնքներում» խորագրով 27-րդ գլխավոր համաժողովին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի նոյեմբերի 11-ից 14-ը ներառյալ գործուղել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք՝ հետևյալ կազմով.

Հայկ Մկրտչյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար
Գևորգ Օրբելյան	«Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

2. Ընդունել ի գիտություն, որ աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Մկրտչյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ ավիատոմսի, որը հոգում է հրավիրող կողմը, իսկ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՈԱԿ) տնօրեն Գևորգ Օրբելյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են ՀՈԱԿ-ի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Մկրտչյանի բացակայության ընթացքում աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Գոշ Սարգսյանին:

4.«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրեն Գևորգ Օրբելյանի բացակայության ընթացքում «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՀՈԱԿ-ի գիտահետազոտական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Լուսինե Ամիրջանյանին:

5. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246